

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2008 թվականի մարտի 20-ին ժամը 15:20-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

Նիստին մասնակցում էին հետևյալ Շահառուների խորհրդի անդամները՝

Արամ Սուքիասյան	«Հայաստանի երիտասարդների ազգային խորհուրդ» ՀԿ
Արայիկ Հովհաննիսյան	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ
Վեհանուշ Հովհաննիսյան	«Մեդվիկ» մանկապատանեկան ՀԿ
Կարեն Նազարյան	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամ
Աշոտ Ոսկանյան	«Ագրոգարգացում» ՀԿ
Հրաչիկ Զավադյան	Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամ
Վանիկ Սողոմոնյան	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ
Հակոբ Աբրահամյան	«Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն» ՀԿ
Սեյրան Մարտիրոսյան	«Ազատանի «Ազատան» համայնքային կենտրոն» ՀԿ
Լևոն Բարսեղյան	«Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» ՀԿ
Տոնական Ղազարյան	«Շենիկ» ՁՕԸ
Վարդան Համբարձումյան	«Գյուղատնտեսական Ասոցիացիաների Ֆեդերացիա» ԻԱՄ

Նիստից բացակայում էին.

Լիլիթ Ավագյան	«Այգաբաց» երիտասարդական հետազոտական կենտրոն ՀԿ
Վիլիկ Բարսեղյան	«Արարատ» ՁՕԸ
Արթուր Սաքունց	«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև.

ԱրաՀովսեփյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն
Նազելի Վարդանյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, գլխավոր իրավախորհրդատու
Նանե Աճեմյան	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի մամլո քարտուղար
Վիկտորյա Գրիգորյան	ՇԽ օգնական, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Նաիրա Աթունյան	Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, Հայաստան
Չոյա Ջուլիակյան	«Քարավան 88» ԲՀԿ
Ջուլիետտա Երեմյանց	«Ահագանգ» ՀԿ
Սոնա Այվազյան	ՏՁԿ/ԹԻ Հայաստան
Հասմիկ Ասլանյան	«Շողեր միություն» ՀԿ
Կարինե Հակոբյան	«Բարեփոխում» ՀԿ
Տիգրան Շահինյան	«Շահեն» ԵՀԿ

Նիստին ներկա էին նաև հետևյալ ՁԼՄ ներկայացուցիչները՝

Գեղանուշ Աբրահամյան, «Կենտրոն TV»

Անուշ Ապրեսյան, «Արմենիա TV»

Վարդուհի Մանուկյան, «Երկիր Մեդիա TV»

Աննա Գգիրյան, «ԱրմենՊրես»

Աննա Սաղաբալյան, «Ազատություն»

Հերմինե Բաղդասարյան, «Հայլուր»

Տիգրան Սիրանյան, «Լրաբեր»

Լիլիթ Ասլանյան, «Արմինֆո»

Նիստը նախագահելու համար առաջարկվեց ՇԽ անդամ Կարեն Նազարյանի թեկնածությունը և միաձայն հաստատվեց: Նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը՝

1. 15:00 ա) ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաջընթացի արդյունքների ներկայացում (ՇԽ նախորդ նիստից առ այսօր ընկած ժամանակահատվածի համար)  
բ) «Ձրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում իրականացրած արտագնա հանդիպման արդյունքների ներկայացում, առաջիկա գործողությունների հստակեցում  
*Արա Հովսեփյան, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր գործադիր տնօրեն*
2. 15:30 Կառավարման խորհուրդ պատվիրակված ՇԽ անդամների մասնակցության և իրականացրած աշխատանքների համառոտ ներկայացում (ՇԽ նախորդ նիստից առ այսօր տեղի ունեցած ԿԽ նիստերի վերաբերյալ)  
*Կառավարման խորհրդի անդամներ*
4. 16:00 ՀՄԿ Հայաստանյան ծրագրի փոխտնօրեն Մայրոն Հիրնիակի կողմից ՇԽ-ին ուղղված նամակի (շահերի բախման վերաբերյալ, 22.02.2008) քննարկում
5. 16:00 Այլ հարցեր

Օրակարգի վերաբերյալ հանդես եկավ ՇԽ անդամ Լևոն Բարսեղյանը: Նա նշեց, որ օրակարգի նախագծում առաջարկել է ընդգրկել ՀՄԿ ԳԳՏ Ջոն Դանիլովիչի նամակն ուղղված նախագահ Ռ. Քոչարյանին՝ կապված ծրագրի շարունակելիության ռիսկերի հետ (Լ. Բարսեղյանի առաջարկությունը կցված էր հիմնական օրակարգին): ՇԽ անդամ Ա. Ոսկանյանի այն հարցադրմանը, թե ինչ ձևաչափով է նախատեսվում հարցի քննարկումը՝ Լ. Բարսեղյանը կարծիք հայտնեց, որ դա ՇԽ որոշման հարց է:

Հրավիրյալ Լ. Ներսիսյանն առաջարկեց դիմել ՀՄԿ Հայաստանյան ներկայացուցիչ Ալեքս Ռասինին պարզաբանում տալ հարցի կապակցությամբ:

Նախագահողը հավանություն տվեց Լ. Բարսեղյանի առաջարկությանը և ՇԽ անդամներին առաջարկեց քվեարկել երկու հիմնական կարծիքների շուրջ՝

առաջինը՝ ընդգրկել Լ. Բարսեղյանի վերոնշյալ առաջարկությունը «այլ հարցերի» մեջ, դիտարկել այն և մտքեր փոխանակել բարձրացված հարցի շուրջ և երկրորդը՝ նամակի քննարկումը հետաձգել մինչև մյուս ՇԽ նիստ և լսել ՀՄԿ ներկայացուցիչների պարզաբանումները:

Ձայների պարզ մեծամասնությամբ անցավ Լ. Բարսեղյանի առաջարկությունը՝ 9 կողմ և 2 ձեռնպահ ձայներով:

### **Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ**

Օրակարգի առաջին հարցը ներկայացնելու նպատակով ձայնը տրվեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Նազելի Վարդանյանին (հաշվի առնելով այն փաստը, որ այլ հանդիպման պատճառով Գ.Գ.Տ Արա Հովսեփյանը ՇԽ նիստին պետք է միանար քիչ ուշ): Ն. Վարդանյանը համառոտ ներկայացրեց ՇԽ նախորդ նիստից ի վեր տեղի ունեցած միջոցառումները, ծրագրային առաջընթացը. ներկայացվեց նաև «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում իրականացված արտագնա հանդիպման արդյունքները, ստացված տեղեկատվությունը, ինչպես նաև առաջիկայում նախատեսված գործողությունները: Ն. Վարդանյանը հորդորեց ՇԽ անդամներին իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերել համապատասխան գործողություններին:

ՇԽ անդամ Վ. Համբարձումյանը հարց բարձրացրեց «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի մի շարք միջոցառումների վերաբերյալ, մասնավորապես դրամաշնորհների հնարավորության հարցը: ՇԽ օգնական Վ. Գրիգորյանն առաջարկեց այլ հարցերի շրջանակներում հրավիրել համապատասխան մասնագետներին, ում Վ. Համբարձումյանը կարող է ուղղել իր հարցերը:

### **Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ**

Կառավարման խորհրդի աշխատանքները ներկայացնելու նպատակով հանդես եկավ ԿԽ անդամ Վանիկ Սողոմոնյանը: Նա նշեց, որ ՇԽ նախորդ նիստից առ այսօր տեղի է ունեցել միայն մեկ ԿԽ նիստ. քննարկվել և հաստատվել է ծրագրի հատկացման 7-րդ հայտը և դրան կից փաստաթղթերը, ներկայացվել է Ենթակառուցվածք բաղադրիչի «Ռոռզման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդում» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցույթի վերաբերյալ ՀՄԿ-ի առարկության նամակը և առաջարկությունները, հաստատվել է վարկային բաղադրիչի մրցույթին մասնակցած ֆինանսական հաստատությունների ցանկը, «6 մայր ջրանցքների վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում» պայմանագրի փոփոխությունները, «Ռոռզման չորս ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը, «Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհների համար իրականացվող աշխատանքների տեխնիկական աուդիտ» խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման պայմանագրի նախագիծը:

Հարց բարձրացվեց (հրավիրյալ Հ. Ասլանյանը) ԿԽ անդամների շահերի բախման դեպքերի բացահայտման վերաբերյալ: Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ կան շահերի բախման տարբեր դեպքեր. հիմնականում դրանք սահմանափակվում են տվյալ անհատին քննարկումներին և որոշումների կայացման գործընթացում չներգրավվելու պայմանով, իսկ շահերի բախման ավելի արտահայտված դեպքերում՝ տվյալ անդամի այս կամ այն դիրքից հրաժարվելու պահանջով:

ՇԽ անդամ Ա. Հովհաննիսյանը նշեց, որ կա ներքին պայմանավորվածություն, համաձայն որի ՀՄՀ-Հայաստան ծրագրի որևէ մրցույթ շահած կազմակերպությունը

ներկայացնող ԿԽ անդամը պետք է հրաժարվի իր անդամությունից պայմանագրի շնորհելու պահից սկսած: Այս առիթով Տոնական Ղազարյանը նշեց, որ շահերի բախումը սկսվում է ավելի վաղ՝ կոնկրետ ծրագրին դիմելու պահից:

### **Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ**

Նախագահողն առաջարկեց ՇԽ անդամներին ներկայացնել իրենց դիրքորոշումը, մտքերը ՀՄԿ Հայաստանյան ծրագրի փոխտնօրեն Մայրոն Հիրնիակի կողմից ՇԽ-ին ուղղված նամակի վերաբերյալ, որի թարգմանությունը ներկայացվել է նիստի մասնակիցներին:

Հանդես եկավ ՀՄՀ-Հայաստանի ԳԳՏ Արա Հովսեփյանը և նշեց, որ նամակը ուղղված է ՇԽ անդամ Ա. Ոսկանյանի՝ որպես Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի տնօրեն և որպես կառավարման խորհրդի անդամ, շահերի բախման հնարավոր դեպքերի կանխարգելում: Ա. Հովսեփյանը կարծիք հայտնեց, որ մինչ հիմա նման իրադրություններ չեն արձանագրվել և առաջարկեց քննարկել առաջիկայում հնարավոր բոլոր դեպքերը:

Նախագահող Կ. Նազարյանը նշեց, որ իր կարծիքով, հարցը պետք է դիտարկել ավելի լայն կտրվածքով, քան միայն նամակում ներկայացված դեպքը, քանի որ ապագայում յուրաքանչյուր ՇԽ անդամ կարող է առնչվել շահերի բախման տարբեր իրավիճակների հետ:

Ա. Ոսկանյանը նույնպես արտահայտվեց. նա փաստեց, որ երկար ժամանակ ներգրավված լինելով ՀՄՀ-Հայաստանի տարբեր օղակներում՝ մինչ այժմ երբեք չի առնչվել այնպիսի հարցերի հետ, որոնք առաջացնեն շահերի բախում կամ դրանց թվացյալ հնարավորություն, մասնավորապես որևէ անգամ չի դիմել ծրագրի իրականացման համար հայտարարվող որևէ մրցույթի: Այնուամենայնիվ, ինքը պատրաստ է նորից քննարկել և վերհանել այն դեպքերը, որոնք կարող են հնարավոր շահերի բախման պատճառ հանդիսանալ:

ՇԽ անդամ Արայիկ Հովհաննիսյանը մասնակիցների ուշադրությունը հրավիրեց այն փաստին, որ Մ. Հիրնիակն իր նամակում առաջարկել է «քայլեր ձեռնարկել շահերի բախման դեպքերից խուսափելու նպատակով»․ այս առնչությամբ կարելի է ասել, որ քայլեր արդեն իսկ ձեռնարկվում են այդ ուղղությամբ, մասնավորապես Հ. Ջավադյանին (ով դիմել է ծրագրերից մեկի մրցույթին) մրցութային գործընթացներից զերծ պահելու հանգամանքը:

Հրավիրյալ Կարինե Հակոբյանը հայտնեց կարծիք այն մասին, որ հստակ է, որ շահերի բախումը սկսվում է ծրագրի իրականացման հետ կապված որևէ մրցույթին մասնակցության հայտ ներկայացնելու պահից:

ՇԽ անդամ Սեյրան Մարտիրոսյանը նույնպես ներկայացրեց իր դիրքորոշումը քննարկվող հարցի կապակցությամբ՝

առաջինը՝ այս դեպքը ևս մեկ անգամ հաստատում է այն մոտեցման ճիշտ լինելը, որ ՇԽ անդամները չպետք է լինեն ԿԽ անդամներ.

երկրորդը՝ շահերի բախումը պետք է սահմանվի և ամրագրվի ՇԽ կանոնակարգում, քանի որ դա այդքան էլ հստակ չէ բոլորի համար.

երրորդը՝ յուրաքանչյուր հասարակական սեկտորի ներկայացուցիչ ինքնակամ պետք է հրաժարվի շահերի բախում առաջացնող իրավիճակներից:

Լևոն Բարսեղյանն արտահայտեց այն մտտեցումը, որ յուրաքանչյուրը կարող է յուրովի ընկալել և մեկնաբանել շահերի բախումը, օրինակ, իր կարծիքով, դա սկսվում է այն պահից, երբ ԿԽ կամ ՇԽ անդամը դիմում է որևէ մրցույթի. անհրաժեշտություն կա անցկացնել առանձին քննարկում նվիրված այս հարցի քննարկմանը, հրավիրել մասնագետների և ամրագրել «շահերի բախման» գաղափարը ՇԽ կանոնակարգում:

Նախագահողը համաձայնեց Լ. Բարսեղյանի՝ առանձին քննարկում անցկացնելու առաջարկությանը և առաջարկեց սահմանել ժամկետներ:

ՇԽ անդամ Տոնական Ղազարյանը մտահոգություն հայտնեց այն մասին, որ անկախ քննարկումներից այս հարցը կմնա բաց, քանի որ շահերի բախումն ակնհայտ է՝ չէ որ խոսքը գնում է «տնօրեն» և «նախարար» հարաբերությունների մասին:

Հանդես եկավ նաև Արա Հովսեփյանը և առաջարկեց, այնուամենայնիվ, տարանջատել ՇԽ-ին ուղղված նամակը ընդհանուր շահերի բախման գաղափարից և Մ. Հիրնիակի նամակը անպատասխան չթողնել:

Քննարկման արդյունքում ՇԽ անդամները որոշեցին պատասխանել Մ. Հիրնիակի նամակին, որտեղ ներկայացած կլինեն հետևյալ հիմնական մտտեցումները՝

- ՇԽ անդամ Աշոտ Ոսկանյանի ԿԽ անդամակցության ժամանակահատվածում շահերի բախման կոնկրետ դեպքեր չեն արձանագրվել,
- առաջիկայում անցկացնել քննարկումներ և լինել ավելի զգոն մման իրավիճակների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ, մասնավորապես, մման դեպքերի առկայության պարագայում սահմանափակել Ա. Ոսկանյանի մասնակցությունը համապատասխան քննարկումներին և քվեարկությանը,
- հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահերի բախման հետ կարող են առնչվել քաղաքացիական հասարակությունը ներկայացնող բոլոր ԿԽ անդամները՝ առաջիկայում իրականացել ՇԽ կանոնակարգի վերանայման գործընթացը, որտեղ կամրագրվի շահերի բախումը կարգավորող դրույթները:

## **Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ**

Այլ հարցերում քննարկվեցին հետևյալ երկու հարցերը՝

1. ՀՄՀ-Հայաստանի «Ձրից դեպի շուկա» բաղադրիչի մասնագետները պատասխանեցին ՇԽ անդամ Վ. Համբարձումյանի կողմից բարձրացրած մի շարք հարցերի, մասնավորապես, արտերկրից ծրագրի շրջանակներում ներկրված տեխնիկայի ֆերմերների տնօրինությանը հանձնելու պայմաններին վերաբերող հարցը:
2. **ՀՄՀ-Հայաստան ծրագրի կասեցման ռիսկերը. Ձոն Ռ-անիլովիչի նամակը նախագահ Ռ. Քոչարյանին (11.3.2008), ՀՀ քաղաքական կացության ազդեցությունը ծրագրի վրա և այլն:** Հարցի կապակցությամբ հանդես եկավ ՇԽ անդամ Լ. Բարսեղյանը և կոչ արեց ՇԽ-ին դիտորդի դեր չստանձնել և որպես ծրագրի շահագրգիռ կողմ ՇԽ դիրքորոշումը արտահայտել նամակ-ուղերձով: Ուղերձը պետք է ուղղվի ՀՄԿ-ին և ՀՀ իշխանություններին: ՇԽ անդամները կողմ արտահայտվեցին Լ. Բարսեղյանի առաջարկությանը և իրեն նշանակեցին պատասխանատու նամակի տեքստը կազմելու համար:

Նախագահողը հայտարարեց նիստի ավարտը ժամը 17:30-ին:

*Նիստն արձանագրեց ՇԽ օգնական Վ. Գրիգորյանը:*

*Մարտի 20, 2008*